

ՀԱՅ ԱԿԱՆՈՒԿ ԸՆԹԵՐՑՈՂ ԳՐԱԴԱՐԱՆ

891.71
5-14

Ա. ԳԱԴԵՅԵՎ

19-NOV-2001

Այ.

\$

Մ Ե Տ Տ Լ Ի Ց Ա

Ազատ պարզության համար

1904

891.7-3
ՕՊ 15

Ա. ԶԵՐԿԱՆԻ Ա. ԶԵՐԿԱՆԻ Ա. ԶԵՐԿԱՆԻ
ՅԵՐԿՐԱՑԻ ՀԵՐԱԿՐԱՑԻ ՀԵՐԱԿՐԱՑԻ

1934

05.09.2013

14661

ՏԱՐԱՎԻ



I

ՊԿՈՍՏՈՒՄԻ ԱԼԻՎԲԸՆ ԵՐ: Խոնավ կես գիշերին Լեվինսոնի ջոկատն յեկավ մի ձիավոր սուրհանդակ: Նրան ուղարկեց ծերունի Սուխովեյ-Կոֆտունը — պարտիզանական ջոկատների շտաբի պետք: Ծերունի Սուխովեյը գրում եր, վոր ճապոնացիները հարձակվել են պարտիզանական գլխավոր ուժերի վրա, իզլեստկայի տակ արյունահեղ կռիվ ե տեղի ունենում և վոր ինքը, իննը գնդակով վիրավորված՝ թագնվում ե վորսորդական ձմեռանոցում:

Լեվինսոնը սուրհանդակին ընդունեց գիշերվա տասնյերկու և կեսին, իսկ կես ժամից հետո, հովիվ Մետելիցայի ձիավոր դասակը կայծակի արագությամբ սլացավ բոլոր ճանապարհներով՝ տարածելով ահազանգող լուրը:

Լեվինսոնը պատսպարվելով խուլ տեղերում, համարյա կորցրեց կապը մյուս ջոկատների հետ: Նա իր պարտիզաններին տարավ տայգայի (Սիբիրի անտառուտ տարածություններ) այնպիսի անմատչելի ճանապարհներով, փորտեղ յերկար տարիներ մարդկային վոտք չեր դիպել:

Ամբողջ Ուլախինսկի հրվիտը գրավված եր ճապոնացիների և կոլչակյանների կողմից: Հակառակորդի հետախույզ պահակը, բոլոր ուղղությամբ, մանրագննին խուզարկում եր և մի անգամ չե, ինչ ընդհարվել ե Լեվինսոնի հսկիչ պահակի հետ:

Առավոտյան կանուխ կտրեցին Լեվինսոնի դեպի լեռները տանող ճանապարհը, սակայն յերկու ժամվա կովից հետո, մինչև յերեսուն մարդ կորցնելով, նա ճեղքեց հակառակորդի ջոկատները և անցավ: Կոլչակյան հեծելազորը կրնկակուի հետապնդեց նրան:



3502
Կ

Այս ուայռնում այլիս չարժի դիմագրել, — խոժոռած դեմքով ասաց Լեվինսոնը։ Միակ ուղին — դեպի հյուսիս եւ Նա բացեց դաշտային պայուսակը և այնտեղից հանեց քարտեզը։ — Ահավասիկ։ Այստեղ կարելի յէ անցնել լեռնաշղթաներով՝ ճիշտ եւ, հեռու յէ, բայց ինչ արած։

Լեվինսոնը վճռեց տայգայում գիշերել, Նա գննելով հետախուզության ճանապարհը, հույս ուներ Տուկո-Վակի հովիտն անցնել, վորը հարուստ ե ձիերով և հացով։

— Մետելիցան կգնա հետախուզելու, իսկ մենք այստեղ կգիշերենք,
— ասաց Լեվինսոնն իր ողնական Բակլանովին և կարգադրություն արեց։

— Կանգնիր — կանչեցին առջեից։

Բացականչությունն անցավ զորաշղթայով և այն ժամանակ, յերբ
առջեռում գտնվողները դադարեցին կանչելուց, հետեւները շարունակում
եյին բացականչել։

— Մետելիցային։

— Մետելիցային են կանչում... — Բացականչությունը նորից անցավ
զորաշղթայով։

Մի քանի վայրկյան անց, բագեյի նման ձկված, արագությամբ ոլա-
ցավ Մետելիցան։ Ամբողջ ջոկատը հպարտությամբ դիտում եր նրա գա-
լարուն և հովվական նստվածքը։

Մետելիցային հետախուզության ուղարկելիս՝ Լեվինսոնը պատվիրեց,
վոր նա անպատճառ այդ նույն գիշերը հետ վերադտոնա։ Մետելիցան
ջոկատը թողեց կեսորվա մոտ ժամի 4-ին։ Նա բարեխզճորեն եր քշում
իր հովատակին (ժերեբեց)։ Արդեն բոլորովին մթնել եր, յերբ նա վեր-
ջապես դուրս յեկավ տայգայից և ձին պահեց մի հին, փտած, փուլ յե-
կած կտրով անտառային տնակի մոտ։

Նու ձին կապեց և, բռնելով փխրուն, ձեռքի տակ թափվող գերանի
ծայրից, բարձրացավ անկյունի վրա, ծակի մեջ գլորվելու վտանգին յեն-
թարկելով իրեն։ Բարձրանալով գալարուն, կիսաճկված վոտքերի վրա,
մոտ տասը բոպե նա առանց շարժվելու կանգնած մնաց՝ հետաքրքրու-
թյամբ նայելով և ականջ դնելով գիշերին։

Մետելիցան ցատկեց ձիու թամբին և յելավ ճանապարհի վրա։ Նրա ու,
վաղուց չբանած անվանետքերը խոտերի միջից հազիվ եյին նշմարվում։
Կեչու բարակ բները՝ ինչպես հանդըրած մոմեր՝ խաղաղ սպիտակին եյին
տալիս մթության մեջ։

Նա բարձրացավ թմբի վրա, ձախ կողմում գնում եր սոպկաների
ու շարքը, վորը ծռված եր ինչպես հսկայական մի գաղանի վողնաշար։
Գետն աղմկում եր։ Մոտ յերկու վերստ հեռու, յերեկ հենց գետի մոտ,



մի խարույկ եր վառվում. ավելի հեռու, ճանապարհը խաչաձևելով, ձգվում էյին զյուղի դեղին, չպլալացող կրակները:

Մետելիցան սկսեց մըսել. պոկված կոճակներով և ոձիքը բաց շապկի վրայից նա հագել եր զինվորական տաք բաճկոն՝ առանց կոճկելու։ Նա վճռեց նախ մոտենալ խարույկին։ Համենայն դեպս պատյանից հանեց ատրճանակը և խրեց գոտու մեջ, բաճկոնի տակ, իսկ պատյանը թագցրեց հետեւ պայուսակում։

Նա արգեն բոլորովին մոտեցել եր խարույկին, յերբ հանկարծ մթության մեջ հնչեց ձիու անհանգիստ խրինջոց։ Հովատակն առաջ վազեց և, ցնցվելով հզոր մարմնով, ականջները շարժելով արձագանքեց խրինջոցին։ Նույն վայրկյանին կրակի մոտ շարժվեց մի սովեր։ Մետելիցան ուժգին մորակեց և ծառացավ ձիու հետ միասին։

Խարույկի մոտ՝ վախեցած աչքերը բացած, մի ձեռքով մտրակը բոնած, իսկ մյուսը վեր բարձրացրած՝ ասես պաշտպանվելով՝ կանգնած եր մի վտիտ սեագլուխ տղա՝ տրեխներով, պատառութված վարտիքով, յերկայն՝ իր հասակին անհամապատասխան բաճկոնով, վորը փաթաթված եր մարմնի շուրջը և կանեփի թելով կապված։

Մետելիցան կատաղաբար հովատակին կանգնեցրեց տղայի հենց քթի տակ, հազիվ նրան չտըռըելով։ Նա տեսավ իր առաջ այդ վախեցած աչքերը, մերկ ծնկներով յերևացող վարախքը և այդ վողորմելի՝ տիրոջ հագից հանված բաճկոնը, վորից այնպես հանցավոր և խեղճ կերպով նայում եր մանկական բարակ և ծիծաղելի վիզը։

— Ի՞նչ ես կանգնել։ Վախեցար։ Այդու ճնճղուկ։ Այդքեզ հիմար, — ասաց Մետելիցան։ Կանգնել ե, վերջացավ գնաց։ Բա յեթե քեզ արորելի...

Տղան վախից հազիվ շոնչ քաշեց և ձեռքը վայր թողեց։

— Իսկ դու ի՞նչ վրա թռար բուզույի պոս — ասաց նա, բայց դեռ ելի վախենալով, — կվախենաս — այստեղ յես ձիեր ունեմ...

— Զիե՞ր — ծաղրածև յերկարացրեց Մետելիցան։ Ասացեք խնդրեմ։ Նա ձեռքերը հենեց կողքերին, հետ կուցավ՝ նայելով աղի վրա և հանկարծ ծիծաղեց։

Տղան շփոթված, անվատահորեն վեր քաշեց քիթը, բայց հասկանալով, վոր վախենալու վոչինչ չկա, այլ բոլորը շատ անկեղծ ե, կնճռվեց այնպես, վոր քիթը դեպի վեր ծովեց և նա ել բոլորովին տղայաբար կուշտ ծիծաղեց՝ հանդգնորեն ու զիւ։ Անակնկալությունից Մետելիցան ավելի ևս բարձրածայն փրթկաց, և նրանք յերկուսն ել մի քանի բոպե այսպես քահ-քահ ծիծաղեցին մեկը — թամբի վրա հետ ու առաջ ճոճվելով, իսկ մյուսը — խոտերի վրա ձեռքի ափերը գետնին հենած և ամեն մի նոր պոռթկումին՝ ամբողջ մարմնով հետ ծովելով։

— Դեհ, լավ ծիծաղեցրիր հա, — ասաց վերջապես Մետելիցան, վոտքը սապանդակից դուրս հանելով: — Խենթ ես դու իրավ... — Նա վայր ցատկեց և ձեռքերը մեկնեց կրակին:

Տղան ծիծաղելը դադարեցնելով, նայում եր նրա վրա լուրջ և ուրախ դարմացմամբ, կարծես նրանից սպասում եր ելի ամենաանսպասելի տարրինակություններ:

— Համա դու ուրախն ես, սատանա — ասաց նա վերջապես:

— ՅԵս, — ժպտաց Մետելիցան: Յես ախակեր, ուրախ մարդ եմ:

— Իսկ յես այնպես վախեցա, — խոստովանեց տղան: Այստեղ յես ձիեր ունեմ: Իսկ յես կարտոֆիլ եմ յեփում:

— Կարտոֆիլ: Եղ շատ լավ բան ե: Մետելիցան նստեց նրա կողքին, առանց ձեռքից բաց թողնելու ձիու սանձը:

— Վհրտեղից ես ճարում եղ կարտոֆիլը:

— Այ քեզ բան, վհրտեղից ես ճարում... Այստեղ վարքան կուզես կա, — և տղան մեկնած ձեռքով շրջան արավ:

— Գողանում ես կնշանակի:

— Գողանում եմ: Տուր յես բոնեմ ձիգ: Յես ախակեր, բաց չեմ թողնի, մի վախեցիր: Համա լավ հովատակ ե, — ասաց տղան, փորձված հայացքով տնտղելով ձիու համաշափ, նիհար, քաշված փորով և մկանուտ տեսքը: Իսկ դու ինքով վհրտեղացի յես:

— Լավ ձի յե — համաձայնվեց Մետելիցան: Իսկ զիւ վորտեղացի յես:

— Այ, տես, — տղան գլխով արավ դեպի կրակների կողմը — Խանեղա յե մեր գյուղի անունը... հարյուր քսան տուն ե:

Այդպես ուրեմն... Իսկ յես Վորոբյովկայից եմ, լեռնաշղթայի այն կողմից: Յերեկի լսել ես...

— Վորոբյովկայից: Չե, չեմ լսել — հեռու յե յերեկի...

— Հեռու յե:

— Մեզ մոտ ինչու յես յեկել:

— Դե ինչպես ասեմ... եղ, ախակեր, յերկար պատմություն ե... Միաք ունեմ ձեզանից ձիեր զնել, ասում են, այստեղ ձիեր շատ ունեք, Յես, ախակեր, սիրում եմ նրանց, եղ ձիերին, — խորամանկ կերպով ասաց Մետելիցան, — ինքս ամբողջ կյանքումս արածացրել եմ, միայն ուրիշներինը:

— Իսկ յես, կարծում ես, իմ ձիերն եմ արածացնում — տիրոջս ձիերն են:

Տղան թեից դուրս հանեց նիհար, կեղտոտ ձեռքը և մեծ մտրակի կոթով սկսեց փորել մոխիրը, վորտեղից հրապուրիչ և ճարպիկ կերպով գլորվեցին սև կարտոֆիլները:

— Գուցե դու հաց ես ուզում — հարցրեց նա: — Յես հաց ել ունեմ, միայն քիչ ե...

— Շնորհակալ եմ, յես հենց հիմա կուշտ կերա, այ — ստեց Մետելիցան, ցույց տալով մինչև կոկորդը:

Տղան կիսեց կարտոֆիլը, փչեց, կճեպով միասին կեսը դրէց բերանը, պտառեց լեզվի վրա և ախորժակով սկսեց ծառել, շարժելով իր սուր ականչիկները: Ծամելը վերջացնելով, նա նայեց Մետելիցայի վրա և ասաց.

— Վորբ եմ յես, կես տարի յե, ինչ վորբ եմ: Հորս կազակները սպանեցին, մորս ել սպանեցին, յեղբօրս ել նույնպես...

— Կազակները — սթափկեց Մետելիցան:

— Բա ով: Սպանեցին հենց այնպես: Ամբողջ բակն այրեցին, և միայն մերը չե, այլ մի տասներկու բակ և ամեն ամիս զալիս են, այժմ ել մի քառասուն մարդ կա: Իսկ մեր հետեւ գավառակային գյուղում, վորը կոչվում է Ռակիտնոյե, լրիվ մի գունդ և կանգնած ամբողջ ամառը: Ի՞նչ վայրագություններ են անում: Կարտոֆիլ վերցրու:

— Բա դուք ինչպես — չփախանք: Ինչպիսի անտառ ունեք... — Մետելիցան նույնիսկ տեղից քիչ բարձրացավ:

— Անտառն ինչ ե վոր: Սաղ կյանքդ անտառում նստելու հո չես: Ել ձահիմ կա այստեղ — մեջը կմնաս, այնքան խորունկ ե....

— Գիտես ինչ — ասաց Մետելիցան տեղից վեր բարձրանալով, — արածացըրու դու իմ ձին, իսկ յես վորով գյուղ կգնամ: Յես տեսնում եմ, վոր ձեզնից վոչ թե բան կարելի յե զնել, այլ վերջին ունեցածդ ել կիսլեն...

— Ինչու յես շատպում: Նստիր, — ասաց փոքր հովիվը, մեկից վշտանալով և նույնպես վեր կացավ: Մենակ ձանձրալի յե այստեղ, — բացատրեց նա խղճակի ձայնով, նայելով Մետելիցայի վրա իր խնդրող աչքերով:

— Զի կարելի, ախակեր, — Մետելիցան ձեռքելը տարածեց: — Իսկական հետախուզելու ժամանակ ե, քանի դեռ մութ ե... Յես շուտով կվերադառնամ, իսկ ձին կկապենք... Այստեղ վհրտեղ և ապրում նրանց գլխավորը:

Տղան բացատրեց, թե ինչպես պիտք ե գտնել այն տերտերի տունը, փորտեղ ապրում ե եսկաղըրոնի պիտը և ինչպես հարմար ե անցնել հետեւ կողմից:

— Իսկ ձեզ մոտ չներ շատ կմնի:

— Ինչքան ասես, բայց նրանք կծան չեն:

Մետելիցան, ձին կապելով և մնաս բարև անելով՝ գետի յերկարությամբ՝ արահետով առաջ շարժվեց: Տղան տիրուր ու տրտում նայում եր նրա հետեւց, մինչև վոր նա անհայտացավ խավարում:



2

ԿԵՄ ժամից հետո Մետելիցան արդեն մոտեցել էր գյուղին. Արա-
նեար ծովեց դեպի աջ, բայց նա շարունակում էր զնալ հնձած մար-
դագետնով, մինչև վոր հանդիպեց գեղջուկների բոստաններին:

Գյուղն արդեն քնած էր: Ճրագները հանգել եյին: Աստղերի լույսով
հազիվ յերեսում եյին խրճիթների տաք հարդե կտուրները:

Մետելիցան, անցնելով յերկու փողոց, շեղվեց դեպի յերրորդը:
Ծները նրան ուղեկցում եյին անհաստատ և խոպոտ հաջոցով, ասես իրենք
ել վախեցած եյին, բայց վոչ վոք փողոց դուրս չեկավ և չկանչեց նրան:

Մետելիցան անցավ ելի մի քանի փողոց, պտտվելով յեկեղեցու
շուրջը և վերջապես դեմ առավ տերտերի այգու ներկած ցանկապատին: Մետելիցան նայեց բակը, փնտոեց աչքերով, մտիկ արավ և, կասկածելի
բան չգտնելով, սուսուփուս և արագությամբ ցանկապատից ներս ցատկեց:

Այդին ծառախիտ էր և ճյուղաւատ, փորոց տերեներն արդեն թափ-
վել եյին: Մետելիցան, համարյա առանց շունչ քաշելու, անցավ դեպի
խորքերը:

Թփերը հանկարծ վերջացան և իրանից դեպի ձախ, նա տեսավ մի-
լուսավոր լուսամուտ: Վերջինս բաց էր: Սենյակում մարդիկ եյին նստած:
Համաշափ մեղմ լույսը սփովել էր թափված տերեների վրա և խնձո-
րենիները կանգնած եյին նրանց մեջ, ինչպես վուկյա...

Սենյակի խորքում, մարդիկ սեղանի շուրջը նստած, թուղթ եյին
խաղում: Աջ թեկի վրա նստած էր նիհար և կարճահասակ մի ծերունի
տերտեր՝ սղալած մազերով. նա ճարպիկորեն այս ու այն կողմն էր տա-
նում սեղանի վրա իր նիհար, փոքրիկ ձեռքերը, անլսելի կերպով մատ-

ներով վերցնելով խաղաթղթերը: Յերեսը Մետելիցային դարձրած՝ նստել
էր մի գեղեցիկ գեր սպա՝ ծխամորճը բերանին: Մետելիցան նրան ես-
կագրոնի պետի տեղ ընդունեց: Զախ կողմը նստել էր մի ուրիշ սպա՝
ու փափախով և առանց ուսազիրների յափնջով, վորի մեջ նա փաթաթ-
վում էր ամեն անգամ, յերբ արդեն թղթերը ձգում էր:

Մետելիցան կռանալով և կողքի վրա հետհետ գնալով, հեռացավ
լուսամուտից: Նա հենց նոր էր դարձել դեպի ծառուղին, յերբ հանկարծ
յերես յերեսի առավ մի մարդու, վորի մի ուսին զցած էր կազակի գրատ
(շինել). նրա հետեւում յերեսում եյին ելի յերկու մարդ:

— Դու Բնձ ես անում այստեղ — զարմացած հարցրեց այդ մարդը,
բռնելով գրադը, վոր քիչ էր մնացել ընկներ, յերբ հանդիպեց Մետելիցային:

Մետելիցան ցատկեց մի կողմ և իրան թփերի մեջ զցեց:

— Կանգնիր: Բռնիր նրան, բռնիր: Այստեղ... եյ... կանչեցին մի քանի
ձայներ: Աստրճանակի սուր և կարճ տրաքոցներն աղմկեցին նրա հետեւից:

Մետելիցան՝ մոլորվելով թփերի մեջ և գլխարկը կորցրած, զուրս
պրծավ յա բախտի, սակայն, առջեւում ձայները հառաչում ելին, վոռնում,
և շների չար հաջոցը լսվում էր փողոցից:

— Ահա նա, բռնիր, — կանչեց մեկը, ձեռքերը մեկնած՝ դեպի Մե-
տելիցան նետվելով:

Գնդակը վզզաց Մետելիցայի հենց ականջի մոտ:


Մետելիցան ել կրակեց: Նրա վրա վազող մարդը սայթաքեց և ընկավ:

— Սնւա ես ասում, չես բռնիր... հանդիսավոր տոնով ասաց Մետե-
լիցան, մինչև ամենասկերջին ըոպեն իսկապես չհավատալով, վոր իրեն
կարող են բռներ:

Սակայն մի հաղթանգամ և ծանր մարդ հետեւց ընկավ նրա վրա և
տակը տրորեց: Մետելիցան փորձեց ձեռքն ազատել նրա տակից, բայց
դլիմին համոզ մի անողոք հարված շշմեցրեց նրան:

Այնուհետև նրան սկսեցին հերթով ծեծել և նույնիսկ գիտակցու-
թյունը կորցրած՝ նա իր վրա զգում էր նորանոր հարվածներ...





3

ԱՅՆ ցածրավալը, վորտեղ քնած եր Լեվինսոնի ջոկատը, քիչ մութ եր և խոնավ, բայց Խառնիխիձայի հետևում դանվող նարնջագույն հարթավայրից նայում եր արել և որը դանդաղորեն բացվեց տայգաւի վրա:

Որապահը, վոր քնել եր ձիերի մոտ, քնի մեջ լսեց մի համառ հընչյուն, վոր նման եր գնդացիրի հետավոր կրկուցին և սարսափած վեր թռավ՝ հրացանը ձեռքն առնելով։ Սակայն այդ փայտփորն եր թխթիկացնում ծեր լաստենու վրա, գետի մոտ։

Որապահը հայնոյեց և ցըտից կծկվելով, փաթաթվելով ծակ-ծակ դրատի մեջ, դուրս յեկավ դեպի հարթավայրը։

«Իսկ Մետելիցան չկա ու չկա։ Յերեկ փորը կուշտ լցրած՝ քնած և մի խրճիթում, իսկ դու անոթի նոտիր այս տեղ», մտածեց որապահը։

Նա չփստահացավ անհանգստացնել Լեվինսոնին և արթնացրեց նրա ողնական Բակլանովին։

— Ի՞նչ, չեկավ...— շուռ յեկավ Բակլանովը, չոելով քնաթաթախ և վոչինչ չհասկացող աչքերը։ Խնչպես թե չեկավ։ Վո՞չ, դու, յեղբայր, թող, եդ չի կարող լինել... Ախ, հա։ Դէհ, զարթեցրու Լեվինսոնին։ Նա վեր ցատկեց, արագ շարժումով գոտին պնդացրեց, քնահար հոնքերը քթի վերև կիտելով։

Լեվինսոնը, չնայած վոր խոր քնած եր, իսկոյն բացեց աչքերը և նստեց։ Որապահի և Բակլանովի վրա նայելով, նա հասկացավ, վոր Մետելիցան չեր վերագարձել և վոր արդեն ժամանակն և ճանապարհ ընկնելու Բայց հենց նույն բոպեյին նա չոքած եր և փաթաթվելով գրատի մեջ պատասխանում եր Բակլանովի անհանգիստ հարցուփորձին։

— Դեհ, ի՞նչ կա վոր, Յես այդպես ել կարծում եյի... իհարկե, մենք նրան ճանապարհին կհանդիպենք։

— Իսկ յեթե չհանդիպենք։

— Յեթե չհանդիպենք, Լսիր, ավելորդ թել չունեմ փաթաթելու համար։

— Վեր կաց, վեր կաց մատակին, գնանք գյուղ—կոչում եր որապահը, վոտքերով հրելով քնածներին։

Խոտերի միջից բարձրանում եյին խճճված մազերով պարտիզանական գլուխները։


Այն միտքը, վոր Մետելիցան կարող եր ընկնել թշնամու ձեռքը, վատ եր պատվաստում մարդկանց։ Ամեն մի պարտիզան փութաջանությամբ և յերկշոտությամբ իրենից վանում եր այդ միտքը։ Ընդհակառակը, որապահի այն յենթագրությունը թե դասակի հրամանատարը «կուշտ կերած և քնած և մի խրճիթում», հետզհետե ավելի շատ կողմակիցներ եր հավաքում, թեև այդ յենթագրությունը չեր սազում Մետելիցայի նման արագաշարժ և գործ կատարող մարդուն։ Շատերը բացարձակ կերպով տրանջում եյին Մետելիցայի «ստորոտթյան և անգիտակցության» մասին և ճանձրացնում եյին Լեվինսոնին իրենց պահանջով՝ իսկույն և յեթ ճամբա ընկնել՝ նրան դիմավորելու համար։ Յեվ յերբ Լեվինսոնը վերջապես հրաման տվեց դուրս գալ, ջոկատում այսպիսի մի հրձվանք առաջացավ, վոր կարծես այդ հրամանով վերջանում եյին բոլոր դժբախտություններն ու տառապանքները։

Նրանք մի ժամ, յերկու ժամ ճանապարհ կտրեցին, իսկ խիզախ և ձյութափայլ մազափնջով դասակապետը չեր յերեսում արահետի վրա։

Նրանք ելի նույնքան ճանապարհ անցան, բայց դասակապետը չկար ու չկար։

Զոկատը տայգայի անտառածայրին եր մոտենում խոր լոռության մեջ։





4

ՄեծելիթԱն իրան գտավ մի մեծ, մութ մարագում: Նա պառկած էր մերկ ու խոնավ գետնի վրա: Նա մեկն հիշեց այն բոլորը, ինչ վոր կատարվել եր իր հետ: Նրան հասցրված հարվածները զեռ աղմկում եյին գլխում, մազերն իրար եյին կպել արյունից և նա զգում եր իր ճակատի և այտերի վրա այդ մակարդված արյունը.

Առաջին միտքը, վոր ծագեց նրա գլխում, դա այն եր, թե արդյոք չի կարելի փախչել: Նա տակն ու վրա արեց ամբողջ մարագը, շոշափեց բոլոր ծակերը, փորձեց նույնիսկ գուռը կոտրել: Նա ամենուրեք հանդիպում եր սառը տախտակի, իսկ ճեղքերն այնքան փոքր եյին, վոր հազիվ հազ եյին ներս թողնում աշնանային առավոտյան աղոտ լույսը:


Մետելիցան զեռ չեր կարողացել ամբողջապես ուսումնասիրել մարագը, յերբ դռան հետեւում աղմուկ լսվեց, ճոնչաց դռան փակիչը և առավոտյան մոխրագույն լույսի հետ միասին մարագ մտան յերկու կազակ՝ զինված և լամպամներով (վարտիքի յերկայնությամբ, վերից վար, վարած գունավոր լայն ժապավեն): Մետելիցան վոտքերը տարածած, կկոցած աչքերով նայում եր նրանց վրա:

Նկատելով Մետելիցային, նրանք անվճռականության մեջ տատանվեցին դռան մոտ: Նա, վոր հետեւում եր կանգնած, անհանգստաբար քիթը ծրմոեց:

Դնանք, հայրենակից, — ասաց վերջապես առջեկի կազակը:

Մետելիցան, գլուխը համառորեն թեքած, դուրս յեկավ:

Վորոշ ժամանակից հետո նա կանգնած եր արդեն իրեն ծանոթ մարդու առջեկից սկս փափախով և յափնջով՝ հենց նույն սենյակում, վորին նայել եր զիշերը տերտերի այգուց: Այստեղ բագկաթոսի վրա ձգված,



նստած եր գեր սպան, վորին Մետելիցան եռկադրոնի պետի տեղ եր ընդունել: Այժմ, յերկուսին ել լավ դիտելով, նա հասկացավ, վոր վոչ թե այդ բարեսիրու սպան եր պետը, այլ մյուսը՝ յափնջովը:

— Կարող եր գնալ,—ընդհատելով ասաց այս մյուսը, նայելով դռան մոտ կանգնած կազակներին:

Նրանք, անշնորհք կերպով իրար հրելով, դուրս յեկան սենյակից:

— Դու ի՞նչ եյիր անում յերեկ պարաեղում—արագ կերպով հարցրեց պետը, կանգնելով Մետելիցայի առաջ և նայելով նրա վրա իր ճիշտ, անթարթ հայացքով:

Մետելիցան լուս, հեգնորեն նայեց նրա վրա, դիմանալով նրա հայցքին, թեև շարժելով սե, ատլասե հոնքերը և ամբողջ իր արտաքինով ցույց տալով, վոր նա չի ասի վոչ մի բան:

— Թող ալդ հիմարությունները,—նորից ասաց պետը, առանց մաղաչափ անգամ բարկանալու և ձայնը բարձրացնելու:

— Ի՞նչ խոսեմ զուր տեղ—ներողամտաբար ժպտաց դասակի հրամանատարը:

Եսկադրոնի պետը մի քանի վայրկյան ուսումնասիրում եր նրա սառած ծաղկահար դեմքը, վորը սվաղված եր չորացած արյունով:

— Ի՞նչ ե, դու այստեղացի՞ յես, թե մի ուրիշ տեղից ես յեկել:

— Թող, ձերդ մեծապատվություն, — վճռականորեն ասաց Մետելիցան, բուռնցքները սեղմելով և հազիվ իրեն զսպելով, վորպեսզի չհարձակվի նրա վրա:

— Ոհո—առաջին անգամ զարմացած և բարձր ձայնով բացականչեց յափնջավոր մարդը: Նա պատյանից հանեց ատրճանակը և խաղացրեց Մետելիցայի ըթի առաջ:

Դասակապետը յերեսը լուսամուտին դարձնելով, քարացած վիճակում լուց:


Դրանից հետո, ինչքան ել նրան ատրճանակով սպառնացին, ինչքան ել խնդրեցին, համոզեցին ճշմարտաբար պատմել ամեն ինչ, խոստանալով լիակատար ազատություն, նա վոչ մի խոսք չարտասանեց և նույնիսկ վոչ մի անգամ չնայեց հարցնողների վրա:

Հարցաբնության ամենատաք ժամանակ դուռը կամացուկ բացվեց և մեկի մազոտ գլուխը՝ խոշոր և ապուշ աչքերով՝ մտավ սենյակը:

— Ի՞նչ—ասաց եռկադրոնի պետը, արդեն հավաքվել եք: Տղաներին տաս, վոր այս կտրիճին վերցնեն:

Այդ նույն յերկու կազակները Մետելիցային թույլ տվեցին գուրու գալ բակը՝ ցույց տալով գարպասի բաց գուրը, խոկ իրենք գնացցին նրա հետեւց: Մետելիցան թեև հետ ընտանայում, բայց զգում եր, վոր յերկու

3502



սպաները նույնպես գալիս են իր հետեւից։ Նրանք դուրս յեկան յեկեղեցու հրապարակը։ Այնտեղ, գերաններից կառուցած խրճիթի մոտ հավաքվում եր ամբոխը, բոլոր կողմից ձիավոր կազակներով շղթայված։

Մետելիցան գլուխը բարձրացրեց և նայեց այս յերերվող, խայտարդետ, խաղաղ ամբոխին, վորը բաղկացած եր մուժիկներից, տղաներից, շրջազգեստ հագած վախեցած կանանցից, գունավոր թաշկինակներով աղջկներից, մազափնջերով խիզախ ձիավորներից, վորոնք այնպես եյին մաքուր հագնված — պճնված, վոր կարծես թե նկարներում լինեն։ Նա անցավ ամբոխի միջով և կանգ առավ խրճիթի դրսի սանդուխքի մոտ։ Սպաները համնելով նրա հետեւից՝ բարձրացան սանդուխքի վրա։

— Այստեղ, այստեղ, — ասաց եռկաղըռնի պետը, ցույց տալով նրան իր կողքին։

Մետելիցան մեկից ցատկելով բոլոր աստիճանների վրայով, կանգնեց նրա կողքին։

Հիմա նա լավ յերեւում եր բոլորին. պինդ և վայելչակազմ, սևամազ, յեղջերվի փափուկ վոտնամաններով, վիզը չկոճկած շապկով, մեջքին կապած խիտ կանաչ փնջեր ունեցող գոտկով, վորոնք դուրս եյին գալիս բաճկոնի տակից։

— Ո՞վ ե ճանաչում այս մարդուն, — հարցրեց պետը, իր սուր և ծակող հայացքը շրջելով բոլորի վրա, մի վայրկյան կանգ առնելով մերթ մեկի, և մերթ ել մյուս դեմքի վրա։


Յեվ ամեն մեկը, վորի վրա կանգ եր առնում այս սուր հայացքը, շփոթկելով և աչքերը թարթելով, կախում եր գլուխը։

— Վոչ վճռ չգիտե — նորից հարցրեց պետը։ — Այդ բանը մենք իսկույն կսպազենք։ Նեշիտայլո, — կանչեց նա, ձեռքով շարժում անելով դեպի այն կողմը, վորտեղ բաց շագանակագույն հովատակ հեծած մի բարձրահասակ սպա, բաջաբար արշավում եր կազակի յերկայն գրատ հագած։

Ամբոխը խուլ կերպով հուզվեց։ Առջեւում կանգնածները հետ նայեցին։ Մեկը սև բաճկոնով ուժեղ և համարձակ կերպով ամբոխը ճեղքելով առաջ եր անցնում, գլուխն այնպես թեքած, վոր յերկում եր միայն նրա տաք, մուշտակե գլխարկը։

— Բաց թողեք, բաց թողեք — ասում եր նա արագությամբ, մի ձեռքով ճանապարհը մաքրելով, իսկ մյուսով հետեւից մեկին տանելով։

Կերջապես նա մոտեցավ սանդուխքին և բոլորն ել տեսան, վոր նա տանում ե յերկար բաճկոն հագած մի նիհար, սևագլուխ տղայի, վորը յերկչոտությամբ իր սև աչքերը հ սուրմ եր մերթ Մետելիցայի, մերթ եսկագրոնի պետի վրա։ Ամբոխը հուզվեց, ավելի ևս բարձր լավեցին հաւաչանքները և կանանց զապկած փսփսուկները։ Մետելիցան ներքե նայեց



և ճանաչեց այն սկսակլուխ փոքր հովիվին, վորին նա յերեկ հանձնեց
իր ձին:

Տղայի ձեռքից բռնած, գյուղացին գղակը հանեց և պետին խոնարհ-
վելով, այսպես ասաց.—

— Ահա այստեղ մի փոքրիկ հովիվ ունեմ:

Բայց յերեկի կասկածելով, վոր իրեն չեն լսի, նա կռացավ դեպի տղան
և մատով ցույց տալով Մետելիցայի վրա, հարցրեց.

— Այս ե, հա՞:

Մի քանի վայրկյան հովիվը և Մետելիցան ուղիղ իրար աշքերի մեջ
եյին նայում: Այնունետեւ տղան հայացըը դարձրեց եսկադրոնի պետին,
հետո իր ձեռքից բռնող գյուղացուն, խորը հասաչեց և գլխով բացասա-
կան շարժում արագ... Ամբոխը, վորն այն աստիճան եր հանդարտվել,
նույնիսկ լսվում եր, թե ինչպես ե հորթը շարժվում յերեցփոխի խցում,
մի փոքր ալեկոծվեց և նորից պապանձվեց:

— Դու մի վախի, հիմարիկ, մի վախի, գուրգուրանքով համոզում
եր գյուղացին, արագ՝ մատով ցույց տալով Մետելիցայի կողմը: Ո՞վ ե
այն ժամանակ, յեթե վոչ՝ նա... Դե դու խոստովանիր, խոստովանիր... մի
վա...ա...ա...զզվելի, չարությամբ կարեց նա հանկարծ և ամբողջ ուժով
քաշեց տղայի թեից:— Դա նա յե, ձերդ մեծապատվություն: Ել ով կա-
րող ե լինել Միայն վախենում ե տղան, բա ել ով պիտի լինի, յերբ
ձին թամբով ե և պայուսակում պատյան կա... Յերեկ իրիկուն յեկել և
կրակի մոտ: «Արածացրու—ասում ե—իմ ձին», իսկ ինքը գյուղ ե գա-
լիս, տղան չի սպասում,—արդեն լուսացել ե,—չի սպասում և քշում ե
ձին այստեղ, իսկ ձին թամբով ե և պայուսակում պատյան կա—ել ով
պիտի լինի:

— Ո՞վ ե յեկել: Ի՞նչ պատյան—հարցրեց պետը...»

Գյուղացին ել, ավելի վլուխը կորցրած՝ ճմլեց գդակը և կրկին մո-
լորվելով ու շփոթվելով պատմեց, թե ինչպես իր հովիվը առավոտյան
գյուղ եր քշել մի ոտարի ձի—թամբով և պայուսակով, վորի մեջ գտնվում
եր ատրճանակի պատյան:

— Ահա թե ինչ—յերկարացնելով ասաց եսկադրոնի պետը—Բայց
չե վոր նա չի խոստովանում—ասաց նա, գլխով ցույց տալով տղայի
կողմը:— Այնուամենայնիվ տուր նրան այստեղ—մենք նրան հարց ու փորձ
կանենք ըստ մեր իմացածի:


Տղան հետեւ կողմից հրվելով, մոտեցավ սանդուխքին, չվստահանա-
լով այնուամենայնիվ բարձրանալ նրա վրա: Սպան աստիճաններով ներքի
վաղեց, բռնեց նրա նիհար, գողացող ուսերից և, իրեն քաշելով, հառեց
նրա՝ վախից կլորացրած աշքերին իր թափանցող և սարսափելի աշքերը:

— Ա—ա...—ա... ճշաց տղան, բբերը կոպերի տակ զցելով:
 — Բա եդ ի՞նչ կլինի, — այլիս չդիմանալով՝ հառաջեց մի կնիկ:
 Հենց այդ նույն ակնթարթում մեկի ոլացիկ և ճկուն մարմինը սանդուխքից ներքե գլորվեց: Ամբոխը հետ ու հետ գնաց և ուժեղ թափով իրար խփվեց: Եսկադրոնի պետը սաստիկ հարվածով վայր ընկավ:
 — Կրակեցէք նրա վրա: Սա ի՞նչ խայտառակություն ե—բղավեց գեղեցիկ սպան, անողնականի նման ճեսքերը պարզելով, ըստ յերևույթին մոռանալով, վոր ինքն ել կարող ե կրակել:

Մի քանի ձիավոր արագությամբ նետվեցին ամբոխի մեջ՝ ձիերով ցիր ու ցան անելով մարդկանց: Մետելիցան իր ամբողջ մարմնով թշնամու վրա ընկնելով, աշխատում եր բռնել նրա կոկորդից, բայց սա պառայտներ եր անում, յափնջին սև թևերի պես բացած, և զղաձղաբար ձեռքը զցում եր գոտուն, աշխատելով ատրճանակը գուրս քաշել: Վերջապես նրան հաջողվեց բացել պատյանը, և հենց նույն ակնթարթում, յերբ Մետելիցան բռնել իր նրա կոկորդից, նա միքանի անդամ իրար հետեւից կրակեց նրա վրա:

— Յերբ վրա համնող կազակները վոտքերից բռնած քաշում եյին Մետելիցային, նա դեռ բռնում եր խոտերից, աշխատում եր բարձրացնել դլուխը, բայց վերջինս անզոր կերպով ընկնում եր և տարվում գետնի վրայով:

— Նեշիտայլո, — կանչում եր գեղեցիկ սպան: — Հավաքել եսկադրոնը... Դուք ել եք գնալու, — հարցրեց նա պետից. — Զի՞ բերեք հրամանատարին: Կես ժամից հետո կազակների եսկադրոնը՝ ուազմի կատարելապես պատրաստած՝ գուրս յեկավ գյուղից և ոլացավ այն ճանապարհով, վորով անցած գիշերը յեկել եր Մետելիցան:



5

ԲԱԿԱԾՆՈՎԸ, վոր բոլորի հետ միասին սաստիկ անհանգստանում եր, վերջապես ել չկարողացավ դիմանալ:

— Լսի՞ր, թույլ տուր յես առաջ գնամ—ասաց նա Լեվինսոնին: Սատանան տանի, ով գիտե, թե ինչ կարող ե պատահել:

Նա խթեց ձիուն և սպասածից ել ավելի շուտ հասավ անտառի ծայրին, գեպի խոտակալած տնակը: Սակայն նա կարիք չզգաց տանիքի վրա բարձրանալու, վորովհետեւ վոչ ավել, քան կես վերստ հեռվում, բլրից ցած եյին իջնում մոտ հիսուն ձիավոր:

Բակլանովը կանգ առավ, ծածկվելով թփերի մեջ և ուղեց ճշտել: Թե արդյոք բլրի հետեւից չեն յերևա նոր ջոկատներ: Ել վոչ վոք չերեվաց: Եսկադրոնը ընթանում եր գանդաղ և խանգարված շարքերով: Դատելով մարդկանց ծուռ և անկանոն նստվածքից և այն բանից, թե ինչպես տաքացած ձիերը շարժում եյին գլուխները, կարելի յեր յեզրակացնել, վոր եսկադրոնը արագ վազքով եր ընթացել:

Բակլանովը ձին հետ դարձրեց և քիչ եր մնացել անտառի ծայրը հասած Լիվինսոնի վրա թոշեր: Նա կանգնելով նշան արեց:

— Շատ են — հարցրեց Լեվինսոնը, նրան լսելուց հետո:

— Հիսուն հոգի:

— Հետեւակի:

— Վո՞չ, ձիավոր:

— Կուբրակ, Դուբով, շատակեցեք, — կամաց ձայնով հրամայեց Լեվինսոնը:

— Կուբրակ, անցիր աշ թեր, իսկ զու Դուբով — ձախ:

Նա Բակլանովին հանձնելով Մետելիցայի հիսույակի հրամանատարու-

Բակլանովս արագ մոտեցավ ձեռքը թրով վայր թողած, և թուրք
փալում եր վայլարի նման: Նրա հետեւից շաշյունով և աղմուկով ոլա-
նում եր Մետելիցայի դասակը...

Յերբ կոիվս արդեն վերջացել եր և կազակների եսկադրոնը, մար-
դիկ և ձիեր զոհ տալով, թագնվել եր կեչի անտառում, պարտիզաններն
սկսեցին վնասուել իրենց հետախույզին: Կազակները նրան նետել եյին
մեծ խրճիթի հետեւ նրբանցքում, ցանկապատի տակ: Մետելիցան պա-
կած եր կողքի վրա և նրա մազերը խճճվել եյին աշնանային թառամած
խոտերի հետ:

Առաջին անգամ գյուղը մտավ Մետելիցայի դասակը: Մարդիկ շտա-
պեցին, ամուր շրջապատելով իրենց հրամանատարի մարմինը, իսկ Բակ-
լանովը, չոքելով, խնամքով գեանից բարձրացրեց դասակապետի սեամաղ
դլուխը:

— ԴԵՇ, ԲՆՀ — հասցըք կեվինսոնը տեղ հասնելով:
— Զի շնչում... — կամացուկ պատասխանեց Բակլանովս, առանց
զետնից վեր բարձրանալու:

Հենց այդ ժամանակ պարտիզանների բազմության մեջ յերեաց
փոքրիկ հովիվը: Նա անցավ շարքերի միջով, իր հետեւից տանելով Մե-
տելիցայի ձիուն:

Մարդիկ հետ նահանջեցին և թույլ ովին նրան առաջ անցնել:
— Ահա նրա ձին, — ասաց տղան: Հոկիր, ասում ե... իսկ ինքն
այլհս չեկավ: Զեր ձին ե, ստացեք....



Ответственный редактор Г. Потенц.
Обложка и рисунки работы худ. Д. Подломаева.
Технический редактор В. Подчасов.

*

Издание 544/4122—худ.
Сдано в производство 11 октября 1934 г.
Подписано к печ. 23 октября 1934 г.

*

Уполкрайлит Б—6373.
Об'ем 1,75 печ. л. (77.944 зн. в 1 бум. листе).
Статформат Б 5 176x250.

Тираж 1500 экз.

Заказ № 5287.

Типография им. Стакки 1902 года АЧКУПП. в Ростове на Дону.

«Ազգային գրադարան



NL0328065

14661

На армянском языке

А. ФАДЕЕВ

М Е Т Е Л И Ц А

АЗОВО ЧЕРНОМОРСКОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԴՐԱՊԱՀՆՈՅԵ

ԽՈԽՈՎԸ ՍՊՈԿՆԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՓՈՂ. № 58
ԳՐԱԿԱՆՈՒՅՆ (ԿԵՐՊՈՎԵՆՔ)

891.71

\$-14